



**Հայաստանի
Հանրապետություն**

Ծրագրի անավանդումը: Ազգային հարմարվողականության ծրագիր (ՀԱԾ) Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար	
Երկիր: Հայաստանի Հանրապետություն	
Իրականացնող: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր (ՄԱԶՄ)	Կառավարման ձևը : Ուղղակի իրականացմամբ ձևաչափ (DIM)
ՄԱԿԶԱՄ/ԵԾՓ վերջնաարդյունք: ՄԱԿԶԱՄ Արդյունք 7/Երկրի ծրագրի փաստաթուղթ Արդյունք 4 (Կայուն զարգացման նպատակ 13): Մինչև 2020 թվականը ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:	
ՄԱԶՄ Ռազմավարական Պլանի արդյունք: 1.4: Կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման խաչաձևող սեկտորների մասով ընդլայնված գործողությունները ֆինանսավորված են և իրականացված	
ՄԱԶՄ սոցիալական և բնապահպանական գնահատման կարգը՝ Ցածր	ՄԱԶՄ գենդերային հավասարության ցուցիչ՝ GEN2
Atlas համակարգի Հատկացման ՆՀ՝ 00102083	Atlas համակարգի վերջնաարդյունքի ՆՀ/ Ծրագրի ՆՀ՝ 00104267
Ծրագրի նախատեսված սկիզբը՝ 2018	Ծրագրի նախատեսված ավարտը՝ 2022
Ծրագրի տևողությունը՝ 48 ամիս	
ԾՀՏԿ նիստի օրը՝ 23.08.2018	
Ծրագրի համառոտ նկարագրություն. ՀՀ կառավարությունը 2016թ. հունիսին մեկնարկել է իր Ազգային հարմարվողականության ծրագիրը (ՀԱԾ)՝ տեղական շահառուների հետ խորհրդակցության և առկա իրավիճակի գնահատման գործողությունների միջոցով: ՀԱԾ իրականացման նախնական գործողությունների ծրագիրը ձևակերպվել և հաստատվել է առանցքային ոլորտների և բնապահպանության նախարարության ներկայացուցիչների կողմից: ՀՀ կառավարությունը դիտարկում է ՀԱԾ-ն որպես Ազգային Մակարդակով Նախատեսված Ներդրման (ԱՄՆՆ) 2015թ. նպատակների իրագործման առանցքային գործոն: Ներկայումս Հայաստանում չկա հարմարվողականության համապարփակ համակարգ, թեև	

ԱՄՆ և Ազգային Հաղորդագրությունների միջոցով ապահովվում են հարմարվողականության առաջնահերթությունների նախնական գնահատականները: Այս բացը լրացնելու համար, տվյալ Ծրագիրը նպատակ ունի աջակցել Հայաստանին՝ կլիմայի փոփոխության (ԿՓ) ՀԱԾ մշակման ուղղությամբ, որը պետք է կրի պարբերական բնույթ, այսինքն՝ ուշադրության կենտրոնում են գտնվելու գործընթացները և հիմնադրությային կարողությունների ամրապնդումը, որպեսզի դրանք կրեն ինստիտուցիոնալ բնույթ՝ երկարաժամկետ կայունության ապահովման համար: Ծրագրի նպատակն է վերացնել առկա խոչընդոտները և աջակցել ԿՓ հարմարվողականության (ԿՓՀ) վեց գերակա ոլորտներում ներդրումների առաջնահերթության սահմանմանը, և մեծացնել ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը այս ծրագրով նախատեսված գերակա գործողությունների իրականացման նպատակով:

ՀԱԾ գործընթացի զարգացման հետ մեկտեղ, Հայաստանում կձևավորվեն միջնաժամկետ և երկարաժամկետ ռիսկերի, ԿՓՀ առաջնահերթությունների և առանցքային ոլորտներում կլիմայի հարմարվողական և կայուն աճին նպաստող առանձնահատուկ գործողությունների համակարգային և պարբերական սահմանման հիմքերը: Միաժամանակ, կայուն զարգացման նպատակների (ԿՁՆ) տեղայնացման շրջանակներում, ՀԱԾ գործընթացը կնպաստի համապատասխան, կլիմայական փոփոխություններին արձագանքող թիրախների ձևավորմանը:

Այս առաջարկվող ծրագրի հիմնական միջանկյալ արդյունքները հետևյալներն են՝

- **Միջանկյալ արդյունք 1-ը կնպաստի բոլոր ոլորտային նախաձեռնությունների միջև սիներգիաների ձևավորմանը, ինչպես նաև համակարգման գործընթացների բարելավմանը:** Կկատարվի սիներգիաների ուղղահայաց ամրապնդում տնտեսության տարբեր ճյուղերում և հորիզոնական ամրապնդում կլիմայի փոփոխությամբ ներագրված տարբեր ոլորտների միջև, ինչը թույլ կտա խուսափել աշխատանքների կրկնօրինակումից, համախմբել սուղ ռեսուրսները և ապահովել ավելի ներդաշնակ և ամբողջական մոտեցում զարգացման ծրագրերում ԿՓՀ արձագանքների ինտեգրման հարցում:
- Համաձայն **Միջանկյալ արդյունք 2-ի**, Ծրագիրը կկառուցի և կամրապնդի **ինստիտուցիոնալ, գործառնական և տեխնիկական կարողությունները ԿՓՀ պլանավորման ուղղությամբ** և կբարելավի կլիմայի հետ կապված գոյություն ունեցող գիտելիքների և ապացույցների բազան՝ նպաստելով կլիմայական ռիսկերի, խոցելիությունների և ազդեցությունների առավել ընդգրկուն և ամբողջական գնահատումների կատարմանը:
- Համաձայն **Միջանկյալ արդյունք 3-ի**, Ծրագիրը կամրապնդի **ֆինանսական և մարդկային ռեսուրսների բարելավման հիմքերը՝ նպատակ ունենալով օժանդակել** կլիմայի վերաբերյալ գիտելիքների և սեռային խտրականությունը բացառող գործընթացների ինստիտուցիոնալացմանը և ներդաշնակեցնելով կլիմային առնչվող ոլորտային վերլուծության մեթոդաբանությունները և բարելավել դրանց ներդրումը **ազգային և տեղական մակարդակով:**
- Միջանկյալ **Արդյունք 4-ով** նախատեսված **գործողությունները կամրապնդեն** մշտադիտարկման իրականացման կարողությունները և կապահովեն հարմարվողականությանն ուղղված գործողությունների իրականացման ընթացքում ձեռք բերված գիտելիքների և փորձի արդյունավետ և արդյունքային ինտեգրումը ազգային և

ուրուտային պլանավորման և կառավարման ասպարեզներում:

- Միջանկյալ արդյունք 5-ի **շրջանակներում գործողությունները** կնպաստեն **ԿՓՀ բյուջեի մշակման ինստիտուցիոնալ, գործառնական և տեխնիկական հզորությունների բարելավմանը**՝ միևնույն ժամանակ տեղական գործընկերների համար բարելավելով կլիմայական խնդիրների ֆինանսավորման հասանելիությունը: Ծրագիրը նաև կօժանդակի մասնավոր հատվածի ներգրավվածության ապահովմանը՝ կատարելով նպաստավոր միջավայրի և խոչընդոտների համապարփակ գնահատում՝ ելնելով մասնավոր հատվածի զարգացման ուղղությամբ Հայաստանի սահմանած առաջնահերթություններից:

Ծրագրի հիմնական շահառուներն են Կլիմայի փոփոխության միջգերատեսչական համակարգման խորհուրդը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿը, Բնապահպանության նախարարությունը, ինչպես նաև վեց առաջնահերթ ոլորտները (ջրային ռեսուրսներ, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, տուրիզմ և բնակավայրեր, որոնք նախանշված են 2015թ. ԱՄՆ-ում):

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆ

ԿԿՀ դրամաշնորհ	2,999,593.00 ԱՄՆ դոլար
(1) ՄԱԶԾ կողմից կառավարվող ընդհանուր բյուջեն	2,999,593.00 ԱՄՆ դոլար
ԶՈՒԳԱԶԵՈՒ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (ՄԱԶԾ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ԱՅԼ ՈՉ ԿԱՆԽԻԿ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ)	
ՄԱԶԾ	300,000 ԱՄՆ դոլար
Կառավարություն ՀՀ ԲՆ (բնեղեն)	260,000 ԱՄՆ դոլար
(2) Ընդամենը համաֆինանսավորում	560,000.00 ԱՄՆ դոլար
(3) Ծրագրի համընդհանուր ֆինանսավորում (1)+(2)	3,559,593.00 ԱՄՆ դոլար
ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Իրականացնող գործակալություն՝ ՄԱԶԾ Ստորագրություն՝	օր/ամիս/տարի

Ենթատեսույթ

Հայաստանը փոքր և ծովին ելք չունեցող երկիր է Կովկասի տարածաշրջանում, որը Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում կլիմայի փոփոխության նկատմամբ ամենա խոցելիներից մեկն է: ՄԱԶՕ-ի 2015թ. Մարդկային զարգացման ինդեքսում երկիրը 85-րդն է 188 երկրների թվում: Երկիրը մեծապես կախված է գյուղատնտեսությունից: Բնակչության մեկ երրորդը (36.7%) գյուղաբնակ է: Գնահատվում է, որ Հայաստանի ընդհանուր բնակչության (3.27 մլն) 35%-ը ապրում է ազգային աղքատության շեմից ցածր:¹ Աղքատությունը սրվում է գործազրկության մակարդակի 28.6%-ով: Համադրելով Հայաստանում երաշտների, հողի էրոզիայի և բնական աղետների պատմական տվյալները, գյուղական ցածր եկամուտ ունեցող համայնքները հատկապես խոցելի են կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ՝ ջրի անապահովության բարձրացման, մարդու առողջության հետ կապված վտանգների ավելացման, գյուղատնտեսական արտադրողականության կրճատման և վտանգավոր կլիմայական երևույթների դեպքերի աճի պատճառով:²

Ընդունելով, որ կլիմայի փոփոխության նկատմամբ Հայաստանի խոցելիությունը նվազեցնելու համար պահանջվում են ավելի մեծ ներդրումներ և ավելի մեծ ներգրավվածություն ԿՓՀ և աղետների՝ ռիսկի նվազեցման համար, 2016թ. Կառավարությունը սկսեց քննարկել ՀԱՕ գործընթացը՝ անցկացնելով ազգային խորհրդակցություններ և իրականացնելով արագ իրավիճակային վերլուծություններ: Իրավիճակի վերլուծությունը ապահովում է ինստիտուցիոնալ շրջանակների և կարողությունների որակական գնահատում, որոնք վերաբերում են ՀԱՕ գործընթացին: ՀԱՕ լիովին համահունչ է ԱՄՆ-ի հարմարվողական բաղադրիչին և կարող է դիտարկվել որպես կլիմայի փոփոխության վերաբերյալ Հայաստանի ազգային և միջազգային որոշումների կայացման միջև կառուցողական հետադարձ կապի միջոց:

Ծրագրի նպատակն է լուծել ԿՓՀ առաջնահերթ ազգային ներդրումների ներկա խոչընդոտները և բարձրացնել ֆինանսների մատչելիությունը՝ ազգային ռազմավարական շրջանակներում սահմանված առաջնահերթ միջոցառումների իրականացման համար: ՀԱՕ գործընթացի զարգացումով Հայաստանը կկապի միջնաժամկետ և երկարաժամկետ ռիսկերի համակարգային և բազմակողմանի նույնականացումը, ԿՓՀ առաջնահերթությունների և կոնկրետ գործողությունների համար, որոնք նպաստում են հիմնական ոլորտներում կլիմայական հարմարվողական և կայուն աճի ապահովմանը: ԿՓՀ ժամանակակից մոտեցումների կիրառումով Հայաստանը կարող է առանձին կանգնած գործողություններից և ծրագրերից ապահովել է անցում ավելի համահունչ և ռազմավարական երկարաժամկետ տեսլականի փոխակերպման Մենդեյի Շրջանակի և Օրակարգ 2030/Կայուն զարգացման նպատակների և Փարիզյան համաձայնագրի իրականացմանը անցնելով; Եթե ազգային ռազմավարական շրջանակի ստեղծումը (այսինքն, ՀԱՕ գործընթացը) իրականացվի և ազգային ինստիտուտներում տեխնիկական կարողությունները զարգանան, ապա կլիմայական հարմարվողական «արտադրանքի» պահանջարկը կաճի ոլորտներում, նպաստելով ԿՓՀ գործողությունների ընդլայնմանը երկրում: Մա կարևորում է ԿՓՀ եզակի նշանակությունը որպես ընթացիկ, միջանկյալ ու նորմատիվային գործընթաց, որը կարող է օգնել հաղթահարել

¹ World Bank. 2012. The Republic of Armenia: Climate Change and Agriculture Country Note. Available at: www.worldbank.org/eca/climateandagriculture

² Stanton E.A. et al. 2009 . The Socio-Economic Impact of Climate Change in Armenia. Stockholm Environment Institute, Somerville, MA

ինստիտուցիոնալ պասիվության միտումները, որոնք պայմանավորված են կլիմայի փոփոխության ազդեցության ակնկալվող հետևանքների և դրա հետ կապված կարիքների անորոշության բարձր մակարդակով: Ստեղծելով արդյունավետ (ցուցադրական) գործողությունների ապացույցների հիմք, այս նախագիծը կապահովի, որ փոխակերպմանն ուղղված, երկարաժամկետ արդյունքներին հասնելը հնարավոր է ծրագրի վրա հիմնված առաջնահերթ ֆինանսավորման մոբիլիզացիայով:

Նպատակները, արդյունքները և ազդեցությունը

Այս ծրագիրը հնարավորություն կտա Հայաստանին նվազեցնել իր համայնքների և ակտիվների խոցելիությունը: Այն կկենտրոնանա հիմնարար կարողությունների ամրապնդման վրա և կապահովի, որ դրանք ինստիտուցիոնալիզացվեն երկարաժամկետ կայունության համար (ծրագրի ժամկետից դուրս): Կենտրոնանալով 2015թ.-ին ԱՄՆ-ում բացահայտված առաջնահերթ ոլորտների վրա (բնական ռեսուրսներ, ջուր, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, զբոսաշրջություն ու բնակավայրեր) և ապահովելով բազմաբնույթ կարողությունները վարչական մակարդակներում, ծրագիրը հնարավորություն է տալիս ներգրավել հարմարվողականության պլանավորումը ազգային և տեղական կառավարման մակարդակներում: Բարելավելով առկա ռիսկերի և խոցելիության վերլուծությունը՝ քաղաքականության համար համապատասխան և կիրառելի ռիսկերի գնահատման համար, նախագիծը կամրապնդի ինչպես որոշումների կայացման համար ապացույցների բազան, այնպես էլ հարմարվողականության տարբերակների բացահայտման, գնահատման և առաջնահերթություն տալու համար առկա տեղեկատվության արդյունավետ օգտագործման կարողությունները: Տեխնիկական մեթոդական գործիքների ներդրումը կապահովի, որ հարմարվողականության միջոցառումների կիրառումը կավելանա ոլորտներում խթանելով լրացուցիչ ԿՓՀ ներդրումների պահանջարկը և հնարավորություն ընձեռնելով պատասխանատու կլիմայական ֆինանսավորման ռազմավարությունների ձեռակերպումը:

Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություններ

Հայաստանի կառավարությունը դիտում է ՀԱԾ-ի գործընթացը, որպես 2015թ. ԱՄՆ-ի հարմարվողականության նպատակների հասնելու բանալին: ՀԱԾ-ն նաև դիտվում է որպես ԱՄՆ-ով ստանձնած պարտավորությունների կատարման մեխանիզմներից մեկը՝ կլիմայի փոփոխության վերաբերյալ ազգային և միջազգային որոշումների կայացման միջև կառուցողական հետադարձ կապ հանգույց ստեղծելու համար: ՀՀ բնապահպանության նախարարությունը սկսել է ազգային շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները ՀԱԾ-ի գործընթացի համար 2016 թ. հունիսին: Որպես այդ գործընթացի մի մաս, նախատեսվել է նախնական շրջանակներ՝ հիմնված ԱՄՆ-ի կողմից սահմանված նպատակների վրա: ՄԱԶԾ-ի կողմից կազմակերպված ԱՄՆ-ի աջակցման առաքելության և երկրի իրավիճակային վերլուծության ընթացքում հիմնական շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ ՀՀ բնապահպանության նախարարությունը, Հիդրոոդերեութաբանության ծառայությունը, ՀՀ էներգետիկայի նախարարությունը և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, անց են կացվել խորհրդակցություններ և հարցազրույցներ, ինչպես նաև հիմնական ոլորտների և ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչների կողմից մշակվել և հաստատվել է ՀԱԾ-ի իրականացման նախնական ճանապարհային քարտեզը:

Շահագրգիռ կողմերի լայն շրջանակների հետ խորհրդակցությունները և ՀԱԾ-ի ողջ գործընթացքում նրանց ներգրավվածությունը ապահովելու նպատակով, որպես ՀԱԾ գործընթացի անբաժանելի մաս կմշակվի շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցման և ներգրավվածության պլան, ներառյալ

գենդերային գործողությունների պլանը: Հասարակության տեղեկացման ու ներգրավման և ներգրավման աշխատանքները կներառեն ներառական, խորհրդակցական և վերապատրաստման միջոցառումներ, որոնք ընթացքում հաշվի կառնվեն շահագրգիռ կողմերի կարիքները, որպեսզի նրանք կարողանան հաջողությամբ իրականացնել նախատեսված գործողությունները: Ընդհանուր առմամբ, ներգրավվածության միջոցառումները նպատակաուղղված կլինեն շահագրգիռ կողմերի սեփականության զգացման բարձրացմանը և կլիմայի փոփոխության հետևանքների երկարաժամկետ անձագանքման համար հարմարվողականության բարձրացման կարևորությունը մասին գիտելիքների զարգացմանը: Շահագրգիռ կողմերը կներկայացնեն պետական կառույցներ, ֆինանսական և մասնագիտական գործընկերներ, միջազգային և ազգային ոչ կառավարական կազմակերպություններ և տեղական քաղաքացիական հասարակություն: «Կանաչ արահետ», «Խազեր», «Էկոլուր», «ICare» և «OxYGen» ոչ կառավարական/համայնքահեն կազմակերպությունները ներկայացված կլինեն մասնակցային գործընթացում: Մասնավոր հատվածի դերը և ներգրավվածությունը նույնպես կընդլայնվի նպատակային գործողություններով:

ՈՍԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Առաջարկվող նախագիծը հիմնվում է 2015թ. ԱՄՆԼ ամփոփված ազգային կլիմայի գերակայությունների վրա և նպատակ ունի նպաստել Հայաստանում միջին և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորմանը: ՀԱԾ կանդիդատնա կլիմայի փոփոխության հարմարվողականության ինտեգրման հիմնական մարտահրավերներին՝ ազգային, ոլորտային և տեղական կառավարման պլանավորման և բյուջետավորման մեջ, ինչպես նշված է 2016թ. շահագրգիռ կողմերի խորհրդակցություններում և ՀԱԾ իրավիճակի գնահատման զեկույցում: Հատկապես ուշադրության կենտրոնում է լինելու հարմարվողականության հիմնարար հնարավորությունների ստեղծումը, ինչպես նաև ապահովելու, որ դրանք ինստիտուցիոնալացված են երկարաժամկետ կայունության համար (նաև ծրագրի իրականացումից հետո): Ակնկալվում է, որ ՀԱԾ-ի մշակման առնվազն երկու վերանայումներ կպահանջվեն ապահովելու ազգային զարգացման շրջանակում և բոլոր ոլորտների զարգացման ծրագրերում ԿՓՀ ամբողջական և համակողմանի ընդգրկվածությունը և:

2015թ. ԱՄՆԼ-ում ներառված առաջնահերթ ոլորտները (բնական ռեսուրսներ, ջրային ռեսուրսներ, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, զբոսաշրջություն և բնակավայրեր) հասցեագրելով և վարչարարական մակարդակով բազմաբնույթ կարողությունների ապահովման միջոցով ծրագրի իրականացումը է ընձեռում հարմարվողականության պլանավորումը ներառել կենտրոնական և տեղական պլանավորման մեջ: Բարելավելով առկա ռիսկերի և խոցելիության վերլուծությունները՝ քաղաքականության համար համապատասխան և կիրառելի ռիսկերի գնահատման համար, նախագիծը ամրապնդում է ինչպես որոշումների կայացման համար ապացույցի բազան, այնպես էլ հարմարվողականության տարբերակների բացահայտման, գնահատման և առաջնահերթության արդյունավետ օգտագործման կարողությունը:

Տեխնիկական մեթոդական գործիքների ներդրումը ապահովում է, որ կանխարգելով հարմարվողականության միջոցառումների կիրառումը կավելանա տարբեր ոլորտներում, խթանելով լրացուցիչ ԿՓՀ ներդրումների պահանջարկը և հնարավորություն ընձեռելով կլիմայի պատասխանատու և գործուն ֆինանսավորման ռազմավարությունների ձևակերպումը՝ Փարիզի համաձայնագրի իրականացման հետագա ընդլայնման համար:

Այս նպատակներին հասնելու համար կհասնեն 5 արդյունքների և համապատասխան գործողությունների միջոցով:

Միջանկյալ արդյունք 1: Ձևավորված են ազգային լիազորությունների շրջանակները, համակարգման մեխանիզմները, իսկ բացթողումները գնահատված և վերացված են

Այս Միջանկյալ արդյունքով կլուծվեն ԿՓՀ համակարգման մեխանիզմներում, միջոլորտային փոխգործակցության և տարանջատված տեխնիկական հմտություններում առկա թերությունները՝ հարմարվողականության պլանավորման և ընդհանուր առմամբ կլիմայի փոփոխության ուղղություններով: Այն նաև նպատակաուղղված կլինի կարողությունների զարգացման նկատմամբ երկարաժամկետ մոտեցման ձևավորմանը, որը կօժանդակի թե՛ ինստիտուցիոնալ կարողությունների կարիքների բավարարմանը, և թե՛ անհատական հմտությունների զարգացմանը:

Ենթարդյունք 1.1 Բացահայտել ՀԱԾ գործընթացի ինստիտուցիոնալ կարգավորումները

Ակնկալվում է, որ Հայաստանի ՀԱԾ-ն կկառավարվի բազմաոլորտային համակարգման մեխանիզմի՝ Միջգերատեսչական Համակարգման Խորհրդի կողմից, որին անդամակցում են 14 նախարարություններ և երկու առանցքային գործակալություններ և ՀՀ բնապահպանության նախարարությունը: Հիմք ընդունելով Հայաստանի՝ 2015թ. ստանձնած ԱՄՆՆ պարտավորությունները ԿՓՀ ինտեգրել ազգային և սեկտորալ զարգացման նպատակներում: Սա ներառում է ՀԱԾ հայեցակարգային փաստաթուղթը (համաձայն ՀՀ կառավարության 49-8 որոշման, 2016թ.): Այս կներառի վարչական մակարդակում անհրաժեշտ կլիմայի փոփոխության հարմարվողականության և համակարգման մեխանիզմները՝ նախաձեռնելով հարմարվողականության միջնաժամկետ և երկարաժամկետ գործողություններ:

Ենթարդյունք 1.2 Բացահայտել և համակարգել առկա տեղեկատվությունը կլիմայի փոփոխության ազդեցության, խոցելիության և հարմարվողականության վերաբերյալ և գնահատել բացթողումները

Քանի որ Հայաստանը գնում է դեպի հարմարվողականության ավելի ամբողջական մոտեցման ընդունման և դրա միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման ներգրավման ուղղությամբ, կարևոր է, որ այն հենվում է ամուր հիմքերի վրա, ներառյալ առկա լավագույն կլիմայական և սոցիալ-տնտեսական տեղեկատվությունը՝ գնահատելու գնահատումը հարմարվողականության տարբերակների ընտրությունը և ապահովել, որ ձեռք բերված դասերը և անցյալի նախաձեռնությունների ազդեցությունները ներգրավված են ՀԱԾ գործընթացի մեջ:

Այս ենթարդյունքը կստեղծի ԿՓՀ և ՀԱԾ-ի մշակման համակարգային գիտելիքներ և կհիմնվի կլիմայական ռիսկերի և հարմարվողականության առկա ուսումնասիրությունների վրա սեկտորալ, ենթազգային և ազգային մակարդակներում՝ գնահատելով և լրացնելով բացերը, վերլուծելով հարմարվողականության իրականացված և իրականացվող նախաձեռնությունները և բացահայտելով հարմարվողականության հետագա հնարավոր տարբերակները: Սա կներառի առկա կլիմայական տվյալների վերլուծություն, որը հիմք կհանդիսանա կլիմայական նախաձեռնությունների համար՝ բարելավելու համար բազային իրավիճակի մասին պատկերացումը, հզորացնելու ԿՓՀ միջամտությունների հիմնավորումները և բարելավելու որոշումների կայացման կարողությունը: Անհրաժեշտ է համապարփակ ուսումնասիրություն համապատասխան նախարարությունների և առաջնային սեկտորների (ջրային ռեսուրսներ, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, տուրիզմ և բնակավայրեր) միջև, քանի որ առկա տվյալները և վերլուծությունը ամբողջական չէ:

Միջանկյալ արդյունք 2. Նախապատրաստական աշխատանքներ ստանձնած ՀԱԾ ուղղությամբ՝ գիտելիքների բազայի ստեղծման և ՀԱԾ կազմման նպատակով

Քանի որ Հայաստանը շարժվում է ԿՓ հարմարվելու և իր միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման գործընթացում դրա ինտեգրացման առավել համապարփակ մոտեցման որդեգրման ուղղությամբ, կենսականորեն կարևոր է, որպեսզի այն հիմնվի կայուն ապացույցների բազայի վրա, այդ թվում՝ կլիմայի և սոցիալ-տնտեսական տեղեկատվության առնչությամբ լավագույն հասանելի տեղեկատվության վրա: Ապացույցների կայուն բազան կնպաստի հարմարվողականության տարբերակների գնահատման առավել առաջադեմ հնարավորությունների ձևավորմանը՝ օգտագործելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ բազմակի չափանիշների ընտրությունը, տնտեսական գնահատման գործիքները, և կապահովի քաղաքացիների և նախկին ու ներկա նախաձեռնությունների ազդեցությունների ինտեգրումը ՀԱԾ գործընթացին: Այս Միջանկյալ արդյունքը կապահովի տեղեկատվական բազայի հիմնում ՀԱԾ մշակման համար, կկենտրոնանա առկա տեղեկատվության հավաքագրման, բացթողումների գնահատման և լրացման, նախկին և ընթացիկ հարմարվողականության նախաձեռնությունների վերլուծության և հարմարվողականության տարբերակների սահմանման ուղղությամբ:

Ենթարդյունք 2.1 Բարելավել կլիմայական տվյալների հասանելիությունը և կիրառությունը

Այս ենթարդյունքը կստեղծի համակարգված գիտելիքներ ԿՓՀ-ի համար և ՀԱԾ-ի մշակում: Այն կկենտրոնանա կլիմայական ռիսկերի և հարմարվողականության գնահատման վերլուծման և թարմացման համար, բացթողումների լրացման, բարելավված հասանելիություն և առկա կլիմայական տվյալների կիրառություն և դրան առնչվող վերլուծություն:

Ենթարդյունք 2.2 Բացահայտել և արձագանքել կարողությունների բացթողումները և թուլությունները՝ ՀԱԾ գործընթացի տեղական սեփականատիրական մոտեցումն ապահովելու համար

Այս ենթարդյունքը կենտրոնանում է հիմնադրամի ստեղծման վրա ազգային և սեկտորալ գործընթացներում ԿՓՀ ներգրավման համար՝ ԿՓՀ բարելավված տեխնիկական կարողությունների, դասընթացների, գործիքների, մեթոդաբանության և ուղեցույցների մշակման միջոցով: Այս ենթարդյունքի գործողությունները կհիմնվեն կլիմայի խոցելիության գնահատման և սոցիալ-տնտեսական գնահատման գործիքներին (ծախսարդյունավետության վերլուծություն, վնաս և այլն) ուղղված դասընթացների իրականացման վրա: Այն կմշակվի և կփորձարկվի տարբեր սեկտորների տեխնիկական նախագծողների համար ազգային և ենթազգային կազմակերպությունների մակարդակով: Այն նաև կկենտրոնանա գենդերային խնդիրների նկատմամբ զգայուն ԿՓՀ գործիքների, մեթոդաբանության և դասընթացների համապատասխան նախարարական և տեղական քաղաքականությունների և փորձի մեջ ներգրավման հնարավորությունների բացահայտման և իրականացման վրա՝ ապահովելով ազգային ԿՓՀ գործողությունների բարելավումը:

Միջանկյալ արդյունք 3 Դուրինացված ՀԱԾ ներդրում

Չնայած, որ երկրի զարգացման համար կլիմայի փոփոխության ներկայացրած սպառնալիքը ճանաչված է, և այն սահմանված է ԱՄՆԼ-ով, այնուամենայնիվ ԿՓՀ-ն Հայաստանի համար նոր զարգացող խնդիր է: ԿՓՀ-ն համարվում է ոլորտային խնդիր, որը կարիք ունի լրացուցիչ ինտեգրման ոլորտային զարգացման պլանավորման և բյուջետավորման գործընթացներում, ինչպես նաև ազգային առաջնահերթությունների հետ առավել մեծ ներդաշնակեցման: ՀԱԾ գործընթացը կոչված է կլիմայի փոփոխության խնդիրները և կլիմայական ռիսկերը լիարժեքորեն ինտեգրել բոլոր համապատասխան ոլորտների պլանավորման, բյուջետավորման և որոշումների կայացման գործընթացներում՝ վարչական բոլոր մակարդակներում: ՀԱԾ ներդրումը

համեմատաբար սահմանափակ բնույթ կկրի ՀԱԾ այս առաջին ցիկլում, քանի որ ակնկալվում է, որ կպահանջվի առնվազն երկու ՀԱԾ ցիկլ՝ ամբողջական և համապարփակ ներգծման համար: Այս Միջանկյալ արդյունքը նպատակ ունի ամրապնդել ՀԱԾ հիմքերը:

Ենթարդյունք 3.1 Բարելավել հարմարվողականության պլանավորման ազգային կարողություններ

Այս գործողությունը կանդրադառնա վերապատրաստման և իրազեկվածության կառուցմանը՝ նպատակ ունենալով ինտեգրել լավագույն փորձը և հարմարվողականության միջամտությունները ոլորտային գործողություններում՝ հիմք ընդունելով երկրի առանձնահատկությունները, ինչը թույլ կտա ապահովել կլիմային վերաբերող տեղեկատվության օգտակարությունը պլանավորման գործընթացում: Միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, բարելավված մեթոդաբանական մոտեցումը ոլորտային և տեղական պլանավորման գործընթացներում կնպաստեն առավել բարելավված ապացույցների բազայի ձևավորմանը կլիմայի խնդիրների հաշվարկվող իրականացված բյուջետավորման համար և կնպաստեն հետագա սիներգիայի ձևավորմանը ՀԱԾ ապագա ցիկլերի և ազգային զարգացման ծրագրերի հեռանկարում:

Ենթարդյունք 3.2 Մշակել հարմարվողականության ներդրման ազգային ռազմավարություն

Այս ենթարդյունքի հիմնական նպատակն է բացահայտել և գնահատել ԿՓՀ ռազմավարական միջամտությունների արդյունքահեն հնարավորությունները միջնաժամկետ և երկարաժամկետ իրականացման համար: Այս ենթարդյունքի գործողությունները կկենտրոնանան հարմարվողականության միջնաժամկետ և երկարաժամկետ հնարավորությունների բացահայտման և առաջնահերթությունների մշակման վրա: Այն կկենտրոնանա նաև ԿՓՀ և ազգային զարգացման նպատակների միջև սերտ կապի ստեղծմանը՝ հարմարվողականության բացահայտված ծրագրերի միջոցով: Դա կնպաստի ռիսկերի կառավարման արդյունավետության և որոշումների կայացման համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

Ենթարդյունք 3.3 Մշակել և տարածել ՀԱԾ

Այս գործողությունը կենտրոնանում է ՀԱԾ-ի և հաղորդակցման ռազմավարության հետ սերտ կապի վրա, այն է ազդել քաղաքականության մշակողների և բոլոր շահագրգիռ կողմերի վրա, ներառյալ հասարակության լայն շերտերը, ներկայացնելով հարմարվողականության կարևորությունը՝ ներկայացնելով հարմարվողականությունը որպես ազգային առաջնահերթություն: Այն նաև պետք է ապահովի, որ հարցի շուրջ բարձրացված հանրային իրազեկումը պետք է նաև պահպանել: Հանրային իրազեկման և հաղորդակցման ռազմավարությունը պետք է խթանվի գործողությունների պլանով և գենդերային գործողությունների պլանով: Ի հավելումն, այս ենթարդյունքը կաջակցի պարբերաբար (օր.՝ տարեկան) կազմակերպել թեմատիկ խորհրդատվություններ և աշխատանքային հանդիպումներ շահագրգիռ կողմերի (տեղական, սեկտորալ, ազգային, մասնավոր, հանրային) հետ՝ բարձրացնելով հանրային իրազեկվածությունը կլիմայի փոփոխության և հատկապես ՀԱԾ վտանգների և հնարավորությունների մասին: Հանրային իրազեկման և կրթական նյութեր նույնպես կմշակվեն այս ենթարդյունքի շրջանակներում:

Միջանկյալ արդյունք 4 ՀԱԾ-ների և հարմարվողականության առաջընթացի գծով Չափումների, հաշվետվողականության և հավաստագրման մեխանիզմների առկայություն

Այս Միջանկյալ արդյունքը կնպաստի ՀԱԾ ընթացքի առանցքային 9 և 10-րդ գործառույթների իրականացմանը: «Հարմարվողականության ծրագրերի համակարգում և մշտադիտարկում, վերանայում և թարմացում ժամանակի ընթացքում՝ նպատակ ունենալով ապահովել հարմարվողականության ուղղությամբ գործադրվող ջանքերի առաջընթացը և արդյունավետությունը և կարողանալ ցույց տալ, թե ինչպես են վերացվում առկա բացթողումները»

և «ՀԱԾ գործընթացների հաշվետվողականության և իրազեկման համակարգում ազգային և միջազգային մակարդակով շահառուների շրջանում՝ Կոնվենցիայի առաջընթացի վերաբերյալ»: Այն նաև կընդգրկի ՀԱԾ-ից դուրս ավելի լայն շրջանակ՝ ներառելով հարմարվողականության միջամտությունների մշտադիտարկումն առավել լայն ազգային զարգացման համատեքստում:

Ենթարդյունք 4.1 Բարելավել ՀԱԾ գործընթացի և հարմարվողականության առաջընթացի մոնիտորինգի հնարավորությունները

Ժամանակակից և որակյալ տվյալների առկայությունը, որոնց հիման վրա կայացվում են որոշումներ մասնավորապես, օրինակ, վերապատրաստման կարիքների առաջնահերթությունների վերաբերյալ որոշումների կայացումը, անչափ էական ազդեցություն ունի ԿՓՀ արդյունավետության կառավարման վրա: Ընդհանուր առմամբ կլիմային վերաբերող խնդիրների մշտադիտարկումը և գնահատումը (ՄԳ) դեռևս սահմանափակ բնույթ են կրում: Անհրաժեշտ է հատուկ, կլիմայական խնդիրների վրա կենտրոնացած ՄԳ թե հարմարվողականության, և թե մեղմման ուղղություններով: Այս Միջանկյալ արդյունքը կլրացնի կարողությունների շարունակական զարգացման և ՄԳ գործողությունները գործող ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակում: Այն կհիմնի համակարգ, որը առաջին ՀԱԾ-ի շրջանակներում (2018 – 2021թթ.) ստեղծված արդյունքի հիման վրա, թույլ կտա Հայաստանին թարմացնել ՀԱԾ-ն, այսպիսով նպաստելով հարմարվողականության պլանավորման հիմնական գործառույթներին և աջակցելով մշակել գործողություններ ՀԱԾ 2-րդ շրջանակի համար:

Միջանկյալ արդյունք 5 Մշակված է ՀԱԾ և ԿՓՀ ֆինանսավորման ռազմավարությունը

ՀԱԾ-ն պետք է ծառայի որպես ներդրումային համակարգ և հանրային և մասնավոր աղբյուրներից տեղական և միջազգային ֆինանսավորման ներգրավման միջոց: ՀԱԾ գործընթացի և Հայաստանի ԿԿԱ ընթացիկ ջանքերի կայունությունն ապահովելու համար, անհրաժեշտ է հիմնել համակարգեր, որոնք թույլ կտան ՀԱԾ և ԿԿԱ ընդհանուր առմամբ, թարմացվեն և ֆինանսավորվեն ժամանակի ընթացքում, մինչ շարունակվում է աջակցել կարողությունների ստեղծմանը և միջակտորալ համագործակցությանը: Այս Միջանկյալ արդյունքը անդրադառնում է հարմարվողականության տարբերակների գնահատման, ծախսավորման, առաջնահերթությունների սահմանման և ֆինանսավորման խնդիրներին: Այս Միջանկյալ արդյունքը օգնում է հայտնաբերել ֆինանսավորման աղբյուրները և հնարավորությունները՝ կլիմայի խնդիրների ֆինանսավորման հասանելիությունը ազգային մասնակիցների և տեղական կառավարման մարմինների համար մեծացնելու ուղղությամբ:

Ենթարդյունք 5.1 Մշակել ֆինանսավորման ռազմավարություն ՀԱԾ շարունակական գործընթացի ապահովելու համար

Այս ենթարդյունքը կկենտրոնանա ԿԿԱ կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների ֆինանսական տարբերակների բարելավման վրա, ինչպես նաև կայուն հարմարվողականության միջնաժամկետ և երկարաժամկետ ձեռքբերումների խթանման վրա և ազգային դերակատարների և տեղական իշխանությունների կողմից կլիմայի ֆինանսավորման հասանելիությանն ուղղված հնարավորությունների վրա: Նաև անհրաժեշտ կլինի ունենալ կենսունակ ներդրումային առաջարկներ, որոնք կներառեն իրատեսականության վերլուծությունների, սոցիալական և բնապահպանական ազդեցության գնահատումների և ներառական խորհրդատվությունների տեղեկատվական բազա, հատկապես՝ կանանց և այլ խոցելի խմբերի համար, ինչը թույլ կտա իրագործել հարմարվողականության արդյունքները ըստ սահմանված առաջնահերթությունների և խթանել որակյալ ներդրումները:

Ենթարդյունք 5.2 Մահմանել և առաջարկել քաղաքականության տարբերակներ հարմարվողականության ֆինանսավորման հավաքագրման ուղղությամբ, այդ թվում՝ հանրային-մասնավոր գործընկերությունների միջոցով

Այս ենթարդյունքի գործողությունները կաջակցեն մասնավոր հատվածի ներգրավմանը տեղական ԿԿԱ ֆինանսավորման մեջ և լրացնել շարունակական ընթացք կրող կարողությունների հզորացմանը՝ ուժեղացնելով ռիսկերի կառավարումը և մեծացնել որոշումների կայացման աջակցման համակարգի արդյունավետությունը: Նաև անհրաժեշտ կլինի ունենալ կենսունակ ներդրումային առաջարկներ, որոնք կներառեն իրատեսականության վերլուծությունների, սոցիալական և բնապահպանական ազդեցության գնահատումների և ներառական խորհրդատվությունների տեղեկատվական բազա, հատկապես՝ կանանց և այլ խոցելի խմբերի համար, ինչը թույլ կտա իրագործել հարմարվողականության արդյունքները ըստ սահմանված առաջնահերթությունների և խթանել որակյալ ներդրումները:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԿՓ ազդեցություններին և կլիմայի փոփոխականությանը կարելի է դիմակայել նոր գիտելիքների, մոտեցումների և գործիքակազմի միջոցով: Այդ տեսակետից կարողությունների ստեղծումը բոլոր սեկտորներում կազմում է հարմարվողականության ռազմավարությունների կիզակետը: Ծրագրի իրականացման ընթացքում ազգային հարմարվողականության ռազմավարության և քաղաքականության ընդունումը նպատակ ունի աջակցել արդեն իսկ մեկնարկած ջանքերի երկրի բնակչության կողմից, և կպահանջի հանրային ինստիտուտների և կառավարության մշակության, ինչպես նաև մոտեցումների և վարքագծային փոփոխություն:

Ծրագիրը կիրառելու է նախկին և ընթացիկ լավագույն փորձը, որը ապացուցել է իր ծախսարդյունավետությունը: Հաշվի առնելով այն, որ ԿԿՀ դեռևս նոր հիմնադրամ է, ձեռք բերված փորձը կկիրառվի արձանագրելու առավելագույն արդյունք ՄԱԶՕ այլ ծրագրերից, դրանով ապահովելով լավագույն փորձի կիրառումը:

Ծրագրի կառավարում

Ծրագիրը հետևելու է ՄԱԶՕ Հայաստանի գրասենյակի կողմից դեկավարվող իրականացման ուղղակի (ԻՈւ) մեխանիզմին, համահունչ ՄԱԶՕ Երկրի ծրագրի: ՄԱԶՕ Հայաստանի գրասենյակը (ՀԳ) համաշխարհային Ծրագրի նպատակներին համահունչ ծրագրային առաջարկ է մշակել և ներկայացրել ԿԿՀ աջակցության հանձնաժողովի հաստատմանը: Հայաստանի գրասենյակը պատասխանատու է ծրագրի արդյունքների համար և պետք է իրականացման առաջընթացի թարմացված տվյալները տրամադրի ԿԿՀ-ին:

ՄԱԶՕ կողմից Ծրագրի իրականացման ընդհանրական պատասխանատվությունը ենթադրում է ժամանակացույցի և ծրագրի նպատակների և արդյունքների ապահովման հսկում:

ԻՈւ մեխանիզմը ներառում է ծախսերի հսկողություն և տրամադրված միջոցների հստակ կառավարում, իրականացնելով հաշվետվողականության ապահովման նպատակով ծրագրի ուղղակի իրականացման ձևաչափն ընդգրկելու է ծախսերի նկատմամբ վերահսկողությունը և ծրագրի համար տրամադրված միջոցների կառավարում, բոլոր անհրաժեշտ ֆինանսական հաշվարկների, գործարքների, լիազորության և վճարման պահանջագրերի իրականացումը ապահովելով ֆինանսական հաշվետվայինությունը:

ՄԱԶՕ-ը Հայաստանի կառավարության հետ ունի ծրագրերի կատարման յուրահատուկ ձևաչափ, որը փոխնախարարների մակարդակով Ազգային տնօրենների մի ինստիտուտ է: Սկսած 2005թ.

վերջնական արդյունքի քննարկման հանձնաժողովները, որոնք բաղկացած են նշված պետական բարձրաստիճան պաշտոնյաներից և ՄԱԶՕ ավագ և միջին դասի ղեկավարությունից, համատեղ դիտարկում են իրականացման առաջընթացը դեպի ծրագրի նպատակները և պայմանավորվում են հաջորդ տարվա միջոցառումների վերաբերյալ:

ՄԱԶՕ ՀԳ այս ծրագրի իրականացումը համապատասխանեցնելու է ՀՕԳՊ-ին և Տարեկան աշխատանքային պլաններին, որոնք մշակվել և փոխադարձ ստորագրվել են ՄԱԶՕ-ի և ազգային տնօրենի կողմից:

Կլիմայի փոփոխության համակարգման միջգերատեսչական հանձնաժողովը հանդես կգա որպես Ծրագրի ղեկավար կոմիտե, որը պատասխանատու կլինի ծրագրի իրականացման քաղաքականության, վերահսկողության և ուղղորդման աջակցության համար: Խորհրդի ներդրումը Ծրագրում կհամարվի Կառավարության իրեղեն ներդրումը:

Կլիմայի փոփոխության միջգերատեսչական աշխատանքային խումբը կիրականացնի կարևոր դեր որպես ՀԱՕ պրոցեսում և կհամակարգվի ՄԱԿ-ի ԿՓՇԿ ազգային համակարգողի կողմից: Աշխատանքային խմբին կաջակցեն ազգային և միջազգային փորձագետները ԿՓՀ ոլորտի համապատասխան կազմակերպություններից: Ծրագիրը կտրամադրի աջակցություն ամրապնդելու կարողությունները և համակարգումը Աշխատանքային խմբում ապահովելով տվյալների համակարգված հավաքագրում, վերլուծություն և հաշվետվողականություն ՄԱԿ-ի ԿՓՇԿ պահանջների արդյունավետ կատարման համար և ծառայելու երկրի ԿՓՀ հարմարվողականության, մեղմման և կանաչ տնտեսության ուղու ռազմավարությանը:

Ապահովելու համար կայունությունը և կապը ԿՓ աջակցության այլ գործողությունների հետ

Ծրագրի ամենօրյա աշխատանքները իրականացվելու են ՄԱԶՕ Կլիմայի փոփոխության ծրագրի արդեն լավ հիմնադրված միավորի կողմից, որը կայացել է Առաջին ազգային զեկույցի և հետագա ԿՓ ծրագրերի իրականացման ընթացքում: Միավորը համակարգվում է և տեղակայված է ԲՆ-ում:

Կառավարությունը՝ բնեղեն տեսքով, կապահովի աջակցություն Ծրագրին տրամադրելով, գրասենյակային տարածք, կապի միջոցներ և այլ կոմունալ հարմարություններ, ինչպես նաև տեղեկատվություն ու Միջգերատեսչական խորհրդի և Աշխատանքային խմբում ներգրավված քաղձառայողների և կառավարության պաշտոնյաների ներդրումը:

Ծրագրի թիմը կներառի Կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգողին, Առաջադրանքի ղեկավարին (ԱՂ), Կլիմայի փոփոխության ծրագրի վարչական օգնականին, Ծրագրի փորձագիտական խմբի օգնականին, Խմբերի ղեկավարներին, ինչպես նաև Ծրագրի ազգային և միջազգային խորհրդատուներին:

Հայաստանի կառավարության և ՄԱԶՕ միջև Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի (ՀԱՍՀ) և ՄԱԿ Զարգացման ծրագրի (ՄԱԶՕ) համապատասխան դրույթները, որը կողմերի միջև ստորագրվել է 1995թ. մարտի 8-ին, այդ թվում՝ պատասխանատվության և արտոնությունների և անձեռնմխելիության մասին դրույթները կիրառվում են սույն օժանդակ ծառայությունների մատուցման վրա:

ՄԱԶՕ Հայաստանի գրասենյակի կողմից ըստ այս փաստաթղթի օժանդակ ծառայությունների մատուցմանն առնչվող, կամ դրանից առաջացող բոլոր պահանջներն ու վեճերը լուծվում են Հիմնական աջակցություն ստանդարտ համաձայնագրի դրույթների համաձայն:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն ծրագիրը կնպաստի հետևյալ Կայուն զարգացման նպատակ/ներ/ին. 13. Ստանձնել հրատապ գործողություններ պայքարելու կլիմայի փոփոխության և դրա հետևանքների դեմ

Սույն ծրագիրը կնպաստի երկի հետևյալ ձեռքբերմանը, որն ընդգրկված է ՄԱԿ ՉԱՕ /Հայաստանի ծրագրային փաստաթղթում
ՄԱԿՉԱՕ/ԵԾՓ վերջնաարդյունք: ՄԱԿՉԱՕ Արդյունք 7/Երկրի ծրագրի փաստաթուղթ Արդյունք 4 (Կայուն զարգացման նպատակ 13): Մինչև 2020 թվականը ներդրվել և կիրառվում են կայուն զարգացման սկզբունքները, շրջակա միջավայրի կայունության, դիմակայունության ձևավորման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, ինչպես նաև կանաչ տնտեսության լավագույն գործելակերպերը:

Այս ծրագիրը կկապվի ՄԱՁՕ ռազմավարական պլանի հետևյալ արդյունքի հետ.
 Արդյունք 1.4: Կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման գործողության միջոցառումներն ընդլայնում, որը ֆինանսավորվել և իրականացվել է:

ԿԿՀ հարացուցային նպատակներ՝ Օժանդակել կլիմայի նկատմամբ դիմակայուն զարգացմանը

	Նպատակի և ձեռքբերման ցուցանիշները	Բազային գիծ	Ծրագրի միջնաժամկետ թիրախը	Ծրագրի վերջնական թիրախը	Ենթադրություններ
ԿԶՆ ցուցանիշներ	13.1.2 Մի շարք երկրներ, որոնք որդեգրում և իրականացնում են աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարություններ համաձայն 2015-2030թթ. Աղետների ռիսկերի նվազեցման Մենդայի Շրջանակի	Երկրներ, որոնք ստեղծել են օրենսդրական և/կամ կարգավորող շրջանակներ են աղետների ռիսկերի կառավարման համար SG_DSR_LEG REG	Ծրագրի իրականացման ակնկալվող միջնաժամկետ կարգավիճակ	Ծրագրի ավարտի ակնկալվող կարգավիճակ	<i>Ծրագրի տվյալները պետք է տրամադրվեն Ազգային վիճակագրական կոմիտեին և այլ մարմինների, որոնք զբաղվում են ԿԶՇ մոնիտորինգով</i>

Ծրագրի ձեռքբերումը՝ Չարգացել Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորումը

Ծրագրի արդյունքները՝					
<p>Արդյունք 1 Ձևավորված են ազգային լիազորությունների շրջանակները, համակարգման մեխանիզմները, իսկ բացթողումները գնահատված և վերացված են</p>	<p>1.1 <i>Բացահայտված են ՀԱԾ գործընթացի ինստիտուցիոնալ կարգավորումները</i></p>	<p>Կլիմայի փոփոխության միջգերատեսչական խորհրդի կազմակերպության միջգերատեսչական խորհուրդը չի գործում</p>	<p>Կլիմայի փոփոխության միջգերատեսչական խորհրդի լիազորությունները, ՀԱԾ-ի կառավարման կարգավորումները և տեխնիկական մշտական աշխատանքային խմբի տեխնիկական առաջադրանքները ձևավորված և հավանության են արժանացած</p> <p>ՀԱԾ իրականացման հայեցակարգային փաստաթուղթը (համաձայն ՀՀ կառավարության 2016թ. թիվ 49-8 որոշման), համաձայն ԱՄՆ-ում նախանշված հարմարվողականության ընդհանուր ուղղվածությամբ, մշակված և հաստատված է</p> <p>Կազմակերպված 3 դասընթացների և աշխատաժողովների միջոցով Ազգային Ժողովը և այլ նախարարություններ գիտակցում են ՀԱԾ գործընթացը և ԿՓՀ</p>	<p>Կլիմայի փոփոխության միջգերատեսչական խորհուրդը գործում է, ընդլայնել է մասնակցությունը և ունի հստակ տարրորշված ԿՓՀ առաքելություն ԿՓՀ հայեցակարգային փաստաթուղթը հաստատված է</p>	<p><i>Լիազորությունները, ՀԱԾ պլանավորման ցիկլի գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը, տեխնիկական մշտական աշխատանքային խմբի տեխնիկական առաջադրանքները մշակված են և հասանելի են ՄԱԿ ԿՓԾԿ կայքում</i></p> <p><i>Դասընթացների և աշխատանքային հանդիպումների նյութերը, միջանկյալ հաշվետվությունները, հրապարակումները և այլն հասանելի են Ծրագրի կայքում</i></p> <p><i>Ռիսկեր՝ ՀԱԾ ազգային հավատարմագրումը կարող է ավելի</i></p>

					<p>երկար տևել, քան պլանավորված է Դասընթացներին բոլոր համապատասխան ազգային շահագրգիռ կողմերի մասնակցության ապահովման դժվարություն</p>
	<p>1.2 Բացահայտված և համակարգված է առկա տեղեկատվությունը կլիմայի փոփոխության ազդեցության, խոցելիության և հարմարվողականության վերաբերյալ և բացթողումները գնահատված են</p>	<p>Մասնատված տվյալների հավաքում բազմաթիվ, չհամակարգված վայրերում: ԿՓՀ միջամտությունների մասով հավաքագրված տեղեկատվության բացակայություն:</p>	<p>Հաշվետվություն/տվյալների հավաքագրում 6 առաջնահերթ սեկտորներում (ջրային ռեսուրսներ, գյուղատնտեսություն, էներգետիկա, առողջապահություն, տուրիզմ և բնակավայրեր) առկա կլիմայական սցենարների մասով ազգային և տարածաշրջանային մակարդակներում և աշխատանքային պլան/ռազմավարություն բացթողումները լրացնելու համար 6 առաջնահերթ սեկտորներում սոցիալ-տնտեսական տեղեկետվության մասով հաշվետվություն և աշխատանքային պլան՝ բացթողումները լրացնելու համար Առաջնահերթ սեկտորներում և առանցքային ոլորտներում խոցելիության առկա ուսումնասիրությունների հաշվետվություն և աշխատանքային պլան՝ բացթողումները լրացնելու համար Հարմարվողականության սեկտորալ, տարածաշրջանային և միջազգային ծրագրերի մասով քաղված դասերի հաշվետվություն, ինչպես նաև սեկտորալ</p>	<p>Տվյալները հավաքագրված են լավ տարրորշված տեղանքներում Տվյալների բացերը բացահայտված են Առկա փորձի, պլանների և ծրագրերի կադաստրի վարում</p>	<p>Ռիսկեր՝ որոշ հաստատությունների դժվարություն տվյալների տրամադրման հարցում Ճշգրիտ և վստահելի տեղեկատվության և ազգային հաստատություններում հաշվետվությունների ներկայացման կարողությունների բացակայություն</p>

			առկա ռազմավարությունների տեխնիկական վերլուծություն, ազգային և միջազգային ավելի լայն ռազմավարական շրջանակների սիներգիաներ/նախնական տվյալներ՝ պլանավորման զարգացման գործընթացներում ԿՓՀ ինտեգրման աջակցությունը ցուցաբերված է		
